են (արարեալ)։ Եւ վէզիրն իմացեալ զբանն՝ չուտ և փութանակի մտեալ ի թագաւորն, և արար խորհուրդ ընդ մեծամեծս եէնկիչէրոյն՝ առնելով զկամս նոցա, և նոքա ոչ եղան ընդ նոսա, այլ մնացին նոքա ի միջատեղ ցրեալք իւրաքանչիւր տեղիսն։ Եւ ոյք կային ի ներսն առ վէզիրն մեծամեծացն ըսպահոցն՝ իբր թէ չիք ի մեղս լինելով, և յոյր վերայ եհաս կարծիք՝ զնոսա կապեալ և եսպան և ձգեաց արտաքս։ Եւ ի Շաբաթի (27 Դեկտ.) գիշերիս ևս, և ի Կիրակիս (28 Դեկտ.)։

Եւ Բշիս (29 Դեկտ.) որ է բարեկենդան Ծննդեան Տեառն մերոյ, ի պալատէ թագաւորին զբազումս սպանեալ(*) և ի ծովն արկեալ և ի թօփչոց մեծամեծացն և ի ճէպէճոցն(**) և սպահիլար աղասոցն և ի մէհթէրիցն(***) մեծամեծաց եւ յեէնկիչէրոցն(****) եւս որք կային յայնմ խորհրդեան, զայսոսիկ զամենեսեան սպանեալ և ի դուրս ձգեալ և զոմանս ծովահեղձ արարեալ։ Եւ որք ունէին կարծիս այսմ բանի՝ փախեալ կորեան, և դեռ ևս յուզեալ որոնեն արարեալ տէֆտէր[1]) ճլ. ոգի ի մեծամեծացն եւ ի նշանաւոր ազանցն(*****), և զխանն Ամմէյտանի փակեալ եւ ի դուրս հանեալ զմիջի եղեալ սպահիքն, և զԱյասօֆի խանքն և ի մէջ քաղաքիս որչափ կայր՝ զամենեսեան փակեցին և ի դուրս հանեցին զսպահիքն, և զղահվէխանէքն զամենայն փակեալ, եւ մունետիկն աղաղակեալ թէ Ամէն մարդ իւր կերպարանաւն կենայ, եւ ըռայայքն զիւրեանց[2]) կերպարանն զգենուն[3])։

1) տէվթէր։ 2) զիւր։ 3) զգենու։

(*) Լուս. զիլիֆլի պալթաճիք։
(**) Քեհեան։
(***) Քեօրն և Զալբխն։
(****) զԱլակեօզն։
(*****) Լուս. osur գրէ. որ է էանաֆ ալային։